## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/90-Հ1

## 20.07.2020Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/90 ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» «08» 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Եգարշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020թ հուլիսի 20-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/90 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանել՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:

1.2 Հաստատել պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման նոր օրացուցային գրաֆիկը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.3 Հաստատել պայմանաագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011027969
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

-------------------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Եգարշին» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Բաշինջաղյան փ. 165/27
էլ. փոստ՝ egarshin2020@gmail.com
«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15100149351000
ՀՎՀՀ 01297519

Տնօրեն՝

-------------------- Ա.Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված թիվ 1*

*« 12 » « 08 » 2020 թ. կնքված*

*N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/90-Հ1 համաձայնագրի*

# ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

## Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-1

## «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետ | |
|---|---|---|---|
| | | Սկիզբ | Ավարտ |
| | **Բաժին-1** | | |
| | **Ներքին ջեռուցում** | | |
| 1 | Ներքին ջեռուցում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում |
| | **Բաժին-2** | | |
| | **Ներքին գազամատակարարում** | | |
| 1 | Ներքին գազամատակարարում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում |
| | **Բաժին-3** | | |
| | **Արտաքին գազամատակարարում** | | |
| 1 | Արտաքին գազամատակարարում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում |
| | **Ընդամենը 2020 թ. կատարվող աշխատանքներ** | **համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում** | **համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում** |

** 1-ին չափաբաժնի համար՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետը չի կարող ավելի լինել, քան փմյալ փարվա դեկտեմբերի 1-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

______________ **Վ. Գասպարյան**

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

______________ **Ա.Մարտիրոսյան**

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2

« 12 » « 08 » 2020 թ. կնքված

N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/90-Հ1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ ըստ ամիսների, ընդ որում. | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611100/501 | **կրթական օբյեկտների հիմնանորոգում** («Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ) | 4428983 | 4428983 | 4428983 | 4428983 | 4428983 | 4428983 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

______________ Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

______________ Ա.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ.Տ